

երկուսն 14-15 × 10-11 հրդ. սինակաց միջեր
եղած բացուցիցն է 1 հրդ. : ՏՈՂ. Բ. խառն է : Կի-
ՍԱՆՈՐԱՆ՝ Բ. 81ա, մեծ է յաջող Բ. 153ա փոքր
է լու : ԽՈՐԱԳԻՐԲ, ՎԵՐՆԱԳԻՐԲ, ՍԿՋԲՆԱՍԱՌԲ՝
կարմիր է կապոյտ մեղմով : ՊԱՏԿԵՐ, Բ. 152բ,
ամենուտ ձեռքի գործ : ԵԶԵՐԱՋԱՐԴԲ՝ Բ. 81ա,
Բ. 153ա, բաւական ճաշակաւոր : ԹՈՂԱԳԻՐԲ ԵՆ
ամեն գլխոց սկզբնատեղին : ԴԱՏԱՐԿ՝ Բ. 80բ, 152ա
272բ : ՀԱՆԳԱՄԱՆԲ՝ լու պահում : ՅԻՇՍ ՏԱԿԱՐՈՒ-
ԹԻՆ՝ Բ. 272 վերջին լուսանցքը մասնաւոր գը-
ռած, ԺԱՄԱՆԱԿ, ՏԵՂԻ, ԳՐԻՉ, ՏԵՐ՝ ամեմօթ :
ՏԵՂԵԿՈՒԹԻՆԲ՝ գրքին ամեն եզերքները կարմիր,
կապոյտ գիծեր քաշուած են : Սկիզբն 4 է վերջն ալ
4ակամ Բ. Բ. Բ. ալ կան դատարկ : Երբեք բաւական
տեղերէն Բ. Բ. Բ. ինկած ըլլալուն, վերջին կազմի ժա-
մանակ նոր Բ. Բ. Բ. դրուած են, եւ նոր գրիչ մը
պակասները գրելով լրացուցած է :

Մատենան Է՝ ԺՈՂՈՎԱԾՈՅ.

(Սկիզբն եղած դատարկ վերջին Բ. Բ. Բ. ին
վրայ գրուած է) : Գիրք քարոզութեան ըստ
կացութեան սրբոյ Աւետարանին եւ ըստ կա-
նոնի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ,
եկեղեցական վարդապետութեան, որոց
առաջինն է կտակն չարչարանաց Տեառն եւ
նախատեսական ըստ ցուցման ցանկին որ
հանդիպի :

Ա. 1. Թ. 1ա. Յանկ եւ ցուցակ սրբոյ
զերգով քարոզարար, չքնաղ եւ յոյժ պի-
տանույ. (սկիզբն) Առաջին քարոզ եւ կտակ
փրկաւոր չարչարանաց Բ. Բ. Բ. Աստու-
ծոյ մերոյ (վերջն) Հի եօթնասուն եւ եր-
կորդ քարոզ, Գրիգոր Մագիստրոսի առ
հեզս ի յուսումն. Գ. պրակ միայն դժուա-
րալոյծ... :

2. Թ. 5բ. Նախերգան մեծի ուրբաթու
Տեառն ի կտակի սրբազան չարչարանացն,
(սկիզբն) (Ե) աղ Քանդի օր է օրհնարա-
նեալ եւ լուսաւոր... :

3. Թ. 6ա. Այլ իմն նախերգան, յետ
նորա ասելի ի Կարապետ եպիսկոպոսէ, եթէ
կամիս քաղցրախօս... :

4. Թ. 6բ-64ա. (Տասն եւ հինգ քա-
րոզ) :

5. Թ. 64ա-67բ. Սրբոյն եպիսկոպոս
Կիրայացւոյ ասացեալ ճառ ի թաղումն Բ. Բ. Բ.
տոսի. եւ առ Յովսէփ Յարեմիայի եւ յա-
ւերումն դժոխոցն, (սկիզբն) Զինչ ա՛յս՝ այ-
սօր լուծիւն բազում երկրի... :

6. Թ. 68ա-79բ. Քարոզ մը. Շարահիւ-
սեալ եւ համահաւաքեալ ի սուրբ դրոց, եւ
Աստուածայնոց եւ յարտակնոց Ֆիլիսօֆո-
սաց՝ յումեմնէ Սիմէօն անարգիւն վարդա-

պետէ յերեւանցւոյ. (սկիզբն) Ամենասրբոյ
հոգւոյն Աստուծոյ քաղցրանուագ քնարն... :

Բ. 1. Թ. 80ա. Գիրք քարոզութեան
ըստ կացութեան սրբոյ աւետարանին Բ. Բ. Բ.
տոսի եւ ըստ կանոնի Հայաստանեայց սուրբ
եկեղեցւոյ, եկեղեցական վարդապետու-
թեան, որք են ասացուած խորիմացք աս-
տուածաբանաբար փիլիսոփայութեամբ վա-
նեալ զննեհական :

2. Թ. 81ա-97բ. Ասացուած խորիմացք
եւ դժուարիմացք. նրբազնուն քննութեամբ
չարադրեցեալ եւ ասացեալ ի սրբոյն Յով-
հաննու Որոտնեցւոյ լայնապայծառ յատ-
ուածաբանէ եւ ուղղադաւան հոգեւորէ հա-
յոց, (սկիզբն) Ով տէր Աստուած Յիսուս
Քրիստոս բան հօր, եւ որդի կուսի, տուր
ինձ անկատարիս, զկատարեալ բանից քոյ
զթարգմանութիւն զի թէ եղիցի ինձ շնորհ...
եւ ես զօրավիզն առաւել զաղօթս սրբոյն
զմեծիդ՝ ասեմ զԱհարոնի, եւ ծերակոյտ իս-
րայէլ արանդ : Ապաւինելով ի հայր եւ յոր-
դի եւ հոգին սուրբ, բուռն հարկանեմ
զթարգմանութեան յառաջ եղեալ մարգարէ-
ական բանիս որ ասէ. «Ի սկզբանէ տէր զեր-
կիր հաստատեցիր եւ գործք ձեռաց քոց եր-
կինք են» :

3. Թ. 97բ-109բ. Բան եւ քարոզ ասա-
ցուած խորիմացք ի սուրբ ծնունդ Տեառն,
ի Գրիգորէ եռամեծէ ի Տաթևեան ճառա-
դայթէ, աշակերտի սրբոյն Յովհ. Որոտնե-
ցւոյ, չարադրեալ ի վերայ բանին որ ասէ. —
Ահա ասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն
մեծ... Դկա. Բ. համար 20 : (Սկիզբն) Որ
օրենիչ էր օրինակին, եւ խորհրդազգն եղե-
լութեանց բոլորին, ջրածինն որով ի նոյն
եղեւ վիմածին... :

4. Թ. 104բ-118ա. Ասացուած եւ խո-
րիմացք քարոզ Գրիգորի եռամեծի, աշա-
կերտի երանելոյն Յովհ. Որոտնեցւոյ, մա-
կանուն Կախեալ ի սէրն Աստուծոյ. Տեսու-
թիւն ի բան մարգարէին Եսայեայ զոր ասէ.
«Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ...»
(սկիզբն) Տեսանողն... տեսութեամբ՝ ի
բնաբարձ բարձու գերամբարձեալն սրբու-
թեամբ... :

5. Թ. 118ա-133բ. Եռամեծի եւ երկոց
երջանիկ վարժապետին իմոյ Յովհ. Որոտնե-
ցւոյ, մականուն կախեալ ի սէրն Աստուծոյ,
ասացեալ ի յօրհնութիւն նորակերտ շինու-
ծոյ տաճարին եւ զանգակատանն առաքելա-

կան աթոռոյն վրանից Ստաթեւի, որ է
չլուիս եւ աթոռ Սիւնեաց վիճակի, ի բանն
որ ասէ Դաւիթ, Տէր ի տաճար սուրբ յիւ-
րում տէր երկինս... (սկիզբն) Սկիզբն ամե-
նայն դոյնութեանց Աստուած, սկիզբն ամե-
նայն բարեաց սէր սկիզբն ամենայն շնորհաց
խոհականութիւն... :

6. Թ. 133բ-138բ. Մեծի բարունապե-
տին Յովհ. Որոտնեցւոյ, ասացեալ ի բանն
տաքելական, որ ասէ, Հայեցարուք ընդ
առաքեալն եւ ընդ քահանայապետն խոստո-
ւածութեան մերոյ... (սկիզբն) Այլ նախ քան
յրանս հետեւեցուք բնական քննութեանց,
եւ ապա յետ այնորիկ ձեռնարկեցուք ի մեկ-
նութիւնս բանիս մշտաշարժ իմն էութիւն
ըստ անձնիշխան... :

7. Թ. 139ա-151բ. Յովհ. Որոտնեցւոյ
տիեզերալոյս բարունապետի արարեալ ասա-
ցուած ի բանս աւետարանին Յովհաննու որ
ասէ. ի սկզբանէ էր բանն... Եւն, (սկիզբն)
Կահաւորեմ ո՛վ կաճառք լուսեւորմից եւ
դասք սերովքէից սակս տրամաբանութեան...
(պակաս մնացած է) :

Գ. Քարոզ պիտանիւք հաւաքեալ :

1. Թ. 153ա-174բ. (Հինգ քարոզ) ի
տէր Առաքել վարդապետէ եւ Սիւնեաց եպիս-
կոպոսէ :

2. Թ. 174բ-181բ. Երեք քարոզ յու-
մեմնէ :

3. Թ. 181բ-195ա. Հինգ քարոզ վա-
րամ, Առաքել, Տիրատուր, Մատթէոս վա-
րդապետներէ, ասացեալ :

4. Թ. 195ա-241բ. քսան քարոզ, Տի-
րատուր, Գէորգ Երզնկացւոյ, Առաքել,
Մատթէոս վարդապետներէ ասացեալ :

5. Թ. 241բ-245բ. Քարոզ վասն դա-
շատանի. — «Ծանիր աստ ընթերցող այս
դատաստանի քարոզես ըսկիզբն զնա գիտ ի
դատաստանի. ես վասն թիւոյ պարապու-
թեան գրեցի :

Դ. Թ. 246ա-248բ. ի Պէրեարմէնիոս
չրոցն հարմար հաւաքեալ յաղագս աստուա-
ծաբանութեան, (սկիզբն) Զի ի բաղադրեալ
միաւորութիւնն, որ ի նիւթոյ, եւ ի տեսակէ
այսինքն ի հոգւոյ եւ ի մարմնոյ մարդկան,
զի ոչ երբեք լինի միան ասանց միւսոյն :

Ե. Թ. 248բ-250բ. Յաղագս քարոզ, թէ
Արիստոտելի, (սկիզբն) Ասէ Արիստոտել, թէ
լուսաւորքն անապականք են :

Զ. Թ. 250բ. Յաղագս յարութեան բան.

(սկիզբն) Յորժամ ի ձմեռային ժամանակի
անվայելուէ... :

Է. Թ. 251բ-255բ. Ի գրոց պատճառա-
Արիստոտելի, եւ կամ որպէս ոմանց թուի
զոլ Պրոկլի ԼԲ առարկութեամբ, կամ պրա-
կօք զանազան խորհրդովք, (սկիզբն) Ամե-
նայն պատճառ... :

Ը. Թ. 256ա-272ա. Առաքել եւ պատ-
մութիւնք արտահանեալ ի գրոց սրբոց առ
ձեռն պատրաստի ի պէտս բանասիրաց, եւ
զիւրահասութիւն ժողովրդեանն Աստուծոյ,
(սկիզբն) Պատմութիւն սիրողաց Բրիտոսի
սիրոյն, մի ոմն ի մարտիրոսաց չարչարէին :
Թ. 272ա. վերին լուսանցքը. Արդ իմացումն
լիցի այս ԻԱ առաքելն որ աստ աւարտեցաւ,
յոտարութեան պանդխտութեանս ծերութեան
յոտարութեան աստէն կից առաջնոյ Խ. առա-
դաւել զրեցի աստէն կից առաջնոյ որոյ
կացն պիտանի քարոզաց, վաստն որոյ
ոմանք նոյն են ընդ առաջնոյն, մաղթեմ ար-
տասօք յիշման արժան առնուլ ներման աղօ-
թիւք ի տէր որով եւ դուք յիշես՛իք ի տէր :
Թ. Թ. 273ա-278ա. (Յանկ եւ երեք
կտոր քարոզ) :

Ժ. Թ. 279ա-285ա. Արիստոտելի իմաս-
տասիրի թուղթ առ Աղեքսանդր թագաւորն,
պատմութիւն յաղագս աշխարհի, (սկիզբն)
Իսկ բազում անգամ ինչ Աստուածային ինչ՝
եւ բարեբախտեալ ճշմարտապէս իրով յԱղեք-
սանդրէ՝ զոլ թուեցաւ իմաստասիրութիւն...
ԺԲ. Թ. 285ա-286բ. Նորին Արիստոտէ-

լի քաջ իմաստասիրի՝ յաղագս առաքելու-
թեանց առ Աղեքսանդր թագաւորն (սկիզբն)
Գովելի են գեղեցիկքն եւ պարսաւելի դար-
չելիքն... :

ԺԳ. Թ. 286բ. Յաղագս Արիստոտէլի եւ
ոմանց իմաստասիրաց, զովն կամ զուստն
... (սկիզբն) Արիստոտելիս իմաստասէր
Ստազիրացի էր... :

ԺԴ. Թ. 287ա-297ա. Նորին Արիստոտէ-
լի մեծի իմաստասիրի վերլուծական. (սկի-
զբն) Դիտաւորութիւն Արիստոտելի ի վեր-
լուծականին բուռն հարկանել... : (14
պրակ) :

ԺԵ. Թ. 287ա-297ա. Նկատումն նորին
Արիստոտէլի մեծի իմաստասիրի, որ վերա-
բերի ի ճանաչումն, միոյն Աստուծոյ,
(սկիզբն) Ուսուցանէ մեզ ի բանս լրացու-
թեանցն այնոցիկ... :

ԺԶ. Թ. 298ա-305ա. Սահմանք մեծի
իմաստասիրին Դաւիթ վասն բառից արարեալ

